Մարդն իր հաջողությունները վավերացնելու և ամրագրելու անհրաժեշտությունը զգում է միշտ: Դա բնական հոգևոր պահանջ է, ինչպես աշակերտի համար ուսուցչի գնահատականը կամ երեխայի համար՝ ծնողի խրախուսանքը: Իսկ ի՞նչ է լինում, երբ ուսուցիչներից ու ծնողներից ակնկալվող քաջալերանքներն արդեն տեղ են գրավել հիշողության գրադարակներին, իսկ աշակերտի կամ զավակի կեցվածքը կրկին անաչառ գնահատվում է, սակայն արդեն բոլորովին այլ տարածքից:

Ո՞րն է այդ տարածքը և ինչպե՞ս է այն կոչվում:

Պարսկահայեր Մինաս և Լուսիկ Աբրահամյանների ընտանիքում ծնված 5 զավակներից ավագի՝ Անուշավանի համար այդ տարածքը որոշակիացավ, երբ Գերմանիայում աշխատանքային առաջին նվաճումները արձանագրեց, երբ արդեն սեփական ընտանիքի նյութական կարիքներ հոգալը հիմնախնդիր չէր, երբ հանապազօրյա հացը, որպես բարեկեցիկ ապրելակերպի հնարավորություն, այլևս մատչելի էր:

«Տարածքը» սկսեց ձև ու բովանդակություն ստանալ: Դա կատարվեց այն պահին, երբ բարեկեցիկ դարձած իր կյանքի հարթությունից նկատեց նաև աջակցության կարիք ունեցող այլ մարդկանց: Նման խոցելի հասարակական խավերի մեջ առաջինը հայ երեխաներին ու ուսանողներին ձեռք մեկնեց: Դա Աստվածահաճո էր: Եվ կայացավ սպասված մերձեցումը: Անհատների կամ առանձին խմբերի հետ շփումները, նրանց ցավերով ապրելը որոշակիացրեցին տարածքը, ընդարձակեցին այն, ապա և տվեցին աշխարհագրական ուրվագիծ: Դա հայկական լազուր մի երկինք էր, այդ երկնքի հետ խոսող մի Արարատ լեռ, մի Սևանա լիճ, մի Երևան, հայոց մեծ ու փոքր բազում բնակավայրեր և, անշուշտ, մայր հող՝ որտեղ ապրում էին յուրահատուկ ժպիտ ու հմայք ունեցող իր հայրենակիցները:

Հայաստանը նրա ուշադրության կիզակենտրոնը դարձավ: Հայոց ապագան վերածվեց մասնագիտություն և կրթություն ստացող երիտասարդի ու աղջկա կերպարի:

Այսօր արդեն ԱՄՆ –ում հաջող աշխատանքային գործունեություն ծավալած Անուշավան Աբրահամյանը հայ երիտասարդին ու աղջկան աջակցում է, ոչ թե առիթ ներկայանալու դեպքում, այլ ծրագրված և համակարգված, որպես իր իսկ կողմից ստեղծված և իր անունը կրող «Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի նախագահ: Նրա գթասիրտ բարեգործությունը մասնավորից վերաճել է ընդհանրականի, քանի որ իր կատարած գործերով այսօր արժանանում է ոչ միայն ուսուցչի գնահատականի կամ ծնողական խրախուսանքի, այլև հարազատ ժողովրդով բնակեցված հայրենի տարածքի՝ Հայաստանի օրհնանքին ու երախտագիտությանը:

Ս.Մ.

(նայել նաև հաջորդ 3 էջերը)

Մարալիկի արհեստագործական ուսումնարանի բարերարներին նվիրված ցուցատախտակը

Ձախից՝ Անուշավան Աբրահամյան, Օֆիկ Աբրահամյան (բարերարի կինը և զինակիցը), Հովնան արք.Տերտերյան (Հայ Առաքելական եկեղեցու ԱՄՆ-ի Արևելյան թեմի հոգևոր առաջնորդ), Կամո Նովշատյան ԱԱԿՀ Հայաստանի մասնաճյուղի տնօրեն, Լևոն Թորոս (ԱԱՀԿ տնօրենների խորհրդի անդամ)

Աշխատանքային հանդիպում ՀՀ ԿԳ նախարար Սպարտակ Սեյրանյանի և ՀՀ ԿԳ նախարարության նախնական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյանի հետ

Միջին մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանն օժանդակող «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամը (ԱԱԿՀ) հայրենիքում հաստատվել է 2006թ. մայիսին: ԱՄՆ-ում գործող այս կազմակերպությունը, նպատակ ունենալով իր գործունեության միջավայրում ընդգրկել աշխարհի տարբեր երկրներում օժանդակության կարիք ունեցող մասնագիտական կրթօջախները, մեկնարկային ծրագիրը սկսեց Հայաստանում, ավելի ստույգ, Հայաստանի մի շարք մարզերի 11 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ամերիկահայ բարերարի ղեկավարությամբ գործող և նրա անունը կրող հիմնադրամը հետամուտ է մասնագիտական կրթօջախներում սովորողների համար ձևավորել բարենպաստ պայմաններ: Սոցիալ-կրթական այդ խնդրի լուծումը հնարավորություն կտա, որպեսզի երիտասարդները և աղջիկները իրենց բնօրրանում ստանան մասնագիտություն, գտնեն բնականոն կյանք, չմտածեն օտար երկրներ արտագաղթելու մասին, հայրենիքում տեսնեն հուսադրող ներկա և զարգացման հեռանկարներ:

Ծրագրի կենսագործումն իր նպաստը կբերի նաև երկրում ծավալվող աղքատության նվազեցման պայքարին, ժողովրդագրական ցուցանիշների կայունացմանը և, անշուշտ, երիտասարդ նոր ընտանիքների ձևավորման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

2006 թվին հիմնադրամի տնօրենների խորհուրդը հաստատեց Հայաստանում նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթօջախների համապարփակ և հարատև զարգացման ծրագիրը, որն այսօր էլ մնում է կազմակերպության գործունեության հիմնարար փաստաթուղթը:

Մասնագիտական կրթության և ուսուցման
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
առաջին բանաձևը

Ծրագիրը բաղկացած է հետևյալ փուլերից

1. Բացառությամբ Երևանի, յուրաքանչյուր մարզի կարիքների գնահատման և հետազոտության արդյունքում բացահայտել մեկական նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթօջախ, որը ծրագրերի իրականացման արդյունքում հնարավորություն կունենա ընդլայնվելու և ընդգրկելու շուրջ 500 ուսանող: Աշխատանքների ընթացքում վերանորոգել այդ կրթօջախները և նպաստավոր պայմաններ ապահովել արդյունավետ կրթական գործընթացների համար:

2. Կրթօջախներում բարելավել առկա գույքը և տրամադրել անհրաժեշտ նոր գույք ու սարքավորումներ արհեստանոցների համար՝ ապահովելով յուրաքանչյուր կրթօջախում 11 պարտադիր հիմնական մասնագիտությունների ուսուցում՝ 1. ավտոմեխանիկ, 2. ատաղձագործ, 3. վարսահարդար, 4. շինարար, 5. խոհարար, 6. դերձակ, 7. համակարգչի շահագործում և ծրագրավորում , 8. ռադիոէլեկտրիկ, 9.գյուղատնտես, 10.ջրամատակակարում/ջրահեռացում, 11. էլեկտրիկ:

Այս մասնագիտությունների ուսուցման մեջ ընդգրկվածները յուրաքանչյուր կրթօջախում հնարավորություն կստանան նաև մասնակցելու ԱԱԿՀ-ի կողմից կազմակերպվող մրցույթներին և պարգևատրումներին՝ վերոնշյալ մասնագիտությունների և արհեստների գծով: Այս գործընթացը նախապայման կհանդիսանա կրթօջախների միջև հետագա համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման համար:

ԱԱԿՀ-ն նախատեսում է նաև զարգացնել գործող այն մասնագիտությունները, որոնք հիմնված են տվյալ մարզի աշխատաշուկայի պահանջների եւ տնտեսական առանձնահատկությունների վրա :

Այս փուլը ներառում է նաև արտադասարանական գործունեության իրականացում ԱԱԿՀ-ի հովանավորությամբ: Ռիսկային տարիքի (13-18 տարեկան) դեռահասների հետաքրքրությունների շրջանակներն ընդլայնելու, նրանց զարգացման համար ապահով և առողջ մթնոլորտ ստեղծելու նպատակով, ԱԱԿՀ-ն նախատեսում է արտադասարանական աշխատանքների հետևյալ ծրագրերը:

*Կազմակերպել առանձին առարկայական խմբակներ՝ մաթեմատիկա, ֆիզիկա, համակարգչային ծրագրավորում և այլն):

*Կազմակերպել սպորտային խմբակներ (ֆուտբոլ, վոլեյբոլ, բասկետբոլ, շախմատ, սեղանի թենիս, և այլն):

*Կազմակերպել արվեստի խմբակներ (երգուպար, ազգային նվագարաններ, նկարչություն և խեցեգործություն, «Հմուտ ձեռքեր», և այլն):

ԱԱԿՀ-ն նախատեսում է յուրաքանչյուր կրթօջախում հիմնադրել ծնող-ուսուցչական հանձնախումբ, որը կստանձնի ԱԱԿՀ ծրագրերի իրականացման համակարգումը և վերահսկումը: Ծնող-ուսուցչական հանձնախմբերի աշխատանքը կնպաստի, թե՛ կրթօջախների կառավարման բարելավմանը, և թե՛ համայնքի հետ ավելի սերտ կապերի ամրապնդմանը: Նախատեսվում է ներգրավել համայնքի անվանի մարզիկներին մարզական ծրագրերի իրականացման ժամանակ (թե՛ որպես գնահատողներ, և թե՛ որպես մարզիչներ): Ներգրավել փորձառու երաժիշտներին եւ արվեստագետներին իրենց հմտություններն ու գիտելիքները նոր սերնդին փոխանցելու համար:

Ծնող-ուսուցչական հանձնախմբերը կիրականացնեն տարեկան մրցանակաբաշխություններ և մրցույթներ, որտեղ հաղթող և լավագույնը ճանաչվող ուսանողների համար նախատեսվում են նաև կրթաթոշակներ և աջակցություն՝ ԲՈՒՀ-երում հետագա ուսումը շարունակելու դեպքում:

Նախատեսվում են նաև վերապատրաստման և զբաղվածության ապահովման ծրագրեր դասախոսական կազմի համար: Արտադասարանական խմբակների գործունեության արդյունքում ուսուցիչները առավել ևս կներգրավվեն ուսումնական հաստատության առօրյային և հասարակական կյանքին, նաև լրացուցիչ եկամտի աղբյուրներ կունենան հենց իրենց մասնագիտության շնորհիվ:

3.Այս փուլում ԱԱԿՀ-ն ուշադրությունը սևեռում է սոցիալապես անապահով խավերին, ծնողազուրկ երեխաներին: Նրանց ԱԱԿՀ-ն կտրամադրի անհրաժեշտ գրենական պիտույքներ, համազգեստներ կամ սպորտային այլ պարագաներ: Նման երեխաների լրիվ ընդգրկվածությունը ապահովելու համար հիմնադրամը կծավալի կազմակերպական գործունեություն, որպեսզի նրանք միշտ լինեն տեսադաշտում և դուրս չմնան ԱԱԿՀ ուսումնական ծրագրերից:

Հիմնադրամի օժանդակությունը տրամադրվում է ի լրումն պետական ֆինանսավորման և ոչ թե վերջինիս փոխարեն:

Հարցազրույց «Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Կամո Նովշատյանի հետ

Հարց- «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամը արդեն 3-րդ տարին է ինչ հաջող գործունեություն է իրականացնում Հայաստանում: Այն կարելի է ասել անկախ Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական կրթահամակարգի նորացման ակունքներում կանգնած առաջին սփյուռքահայ կազմակերպություններից է: Ինչ նպատակով է հիմնադրամը ստեղծվել և ինչպիսի՞ ընդունելություն ունեցավ Հայաստանում:

Պատասխան-«Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի նպատակն է բարելավել աշխարհի կարիքավոր երիտասարդության կենսապայմանները և նրանց համար միջին մասնագիտական կրթության և ուսուցման ասպարեզում ապահովել բարենպաստ հնարավորություններ: Եվ քանի որ հիմնադիրը մեր հայրենակից Անուշավան Աբրահամյանն է, բնականաբար այդ ազնիվ առաքելությունը նրա կամքով մեկնարկել է Հայաստանից: Հիմնադրամը շահույթ չհետապնդող բարեգործական կազմակերպություն է: Այն հիմնադրվել է ԱՄՆ-ում և Հայաստանում իր գործունեությունը իրականացնում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանում գրանցված մասնաճյուղի միջոցով: Հիմնադրամն այսօր զգալի օժանդակություն է ցուցաբերում Հայաստանի 11 մասնագիտական կրթօջախների և նախապատրաստվում է զարգացնել իր գործունեությունը՝ իրականացնելով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթօջախների համապարփակ և երկարատև զարգացման ծրագիր: Մեր նպատակն է երիտասարդության համար ապահովել որակյալ կրթություն և մասնագիտություն ստանալու առավել բարենպաստ հնարավորություն: Ի դեպ, հիմնադրամի առաքելությունը արժանացել է, ոչ միայն պետական մարմինների և համապատասխան կրթօջախների աշխատակիցների, դասախոսների, ուսանողության և նրանց ծնողների խրախուսանքին: Ես հպարտությամբ պիտի նշեմ, որ կազմակերպությանը իր Հայրապետական օրհնանքն է բերել և ամենայն աջակցություն է ցուցաբերում Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն: Վեհափառը մեզ է հասցեագրել իր ողջույնի խոսքը, որտեղ մասնավորապես շեշտել է այն հանգամանքը, որ «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի նախաձեռնության շնորհիվ երիտասարդ հայորդիները հնարավորություն պիտի ունենան իրենց բնատուր ունակությունները զարգացնելու, արհեստագիտական կրթություն ստանալու և պատրաստվեն իբրև բանիմաց արհեստավորներ ի սպասավորություն մեր ժողովրդի:

Հարց - Դուք նշեցիք, որ հիմնադրամի գործունեությունը պետական մարմինների հավանությանն է արժանանում: Դա անշուշտ հաջող համագործակցության ծանրակշիռ երաշխիք է: Սակայն այդ ֆոնի վրա չե՞ք կարծում, որ կարևոր է նաև պաշտոնական, կամ նաև հարցի փաստաթղթային հիմնավորումների խնդիրը:

Պատասխան - Անշուշտ: Հիմնադրամի ռազմավարությունը ժամանակային մեծ ընդգրկում ունի և այն երբեք մեկ կամ երկու տարվա համար չէ նախատեսված: Մենք տակավին մեր սկսած գործի առաջին հատվածում ենք և զարգացման ու առաջընթացի դեռ երկար ճանապարհ ունենք անցնելու: Մեզ համար պաշտոնական գործավարությունը, աշխատանքների կազմակերպման բարձր օրինականությունը և փաստաթղթային հիմնավորումները առաջնային կարևորություն ունեն: Պատահական չէ, որ Հայաստանում գործունեությունը սկսելու առթիվ մենք ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ 2007թվին կնքեցինք փոխըմբռնման հուշագիր, համաձայն որի ամրագրվեցին Հայաստանի կրթական համակարգի զարգացմանն ու բարելավմանն ուղղված ծրագրեր իրականացնելու երկկողմանի մտադրությունները և համագործակցության հիմնական ուղղություններն ու եղանակները:

Հարց –Իսկ ինչպե՞ս եք կարգավորում հիմնադրամի գործընկերը դարձած կրթօջախների հետ Ձեր հարաբերությունները:

Պատասխան - Նախ նշեմ, որ հիմնադրամի օժանդակությունը տրամադրվում է ի լրումն պետական ֆինանսավորման և աջակցության, այլ ոչ թե վերջինիս փոխարեն: Այնպես որ, այդ առումով արդեն մեծ կամ փոքր օժանդակությունը լրացուցիչ և զգալի առաջընթացի հնարավորություն է կրթօջախի համար: Ինչ վերաբերում է համագործակցության և ծրագրերի իրականացման գործընթացներին, ապա այդ ամենը նույնպես կարգավորվում է համապատասխան երկկողմանի պայմանագրերի՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարության հետ կնքված փոխըմբռնման հուշագրի:

Հարց- Բացի ՀՀ գիտության և կրթության նախարարությունը, էլ ի՞նչ պետական կամ ոչ պետական կազմակերպությունների հետ եք առնչվում Ձեր աշխատանքների ընթացքում:

Պատասխան - Հիմնադրամի գործունեության ասպարեզը այնքան մեծ է, որ մենք բացի կրթականից առնչվում ենք նաև տնտեսական, սոցիալական և մշակութային ամենաբազմազան գործառույթներ իրականացնող պետական և ոչ պետական ամենատարբեր կազմակերպությունների հետ: Մեր գործընկերների շարքում են՝ Սուրբ Մայր Աթոռը, ՀՀ քաղաքաշինության, մշակույթի և երիտասարդության նախարարությունները, Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամը, Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը և էլի մի շարք միջազգային, հանրապետական և տեղական կազմակերպություններ:

Կամո Նովշատյանի կենսագրական տվյալներից

1958թ.- ծնվել է Արարատի շրջանի Վեդի ավանում
1980թ.- ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը և ստացել էներգետիկի որակավորում
1980թ.- անցել է աշխատանքի ՀՀ ՆԳ նախարարությունում: ՆԳ ծառայության մայոր է
1997-2006թթ.- աշխատել է ՀՀ մաքսային պետական կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունում, որպես ավագ մասնագետ
2006թ-ից «Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամի Հայաստանի մասնաճյուղի տնօրենն է

3 տարում մոտ 1.000.000 $-ին համարժեք դրամ Հայաստանի 11 քոլեջներին

Ամերիկյան շահույթ չհետապնդող «Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամը, որը 2006թվից իրականացնում է նախնական եւ միջին մասնագիտական կրթօջախների համապարփակ ու երկարատեւ զարգացման ծրագրեր, Հայաստանում արդեն կատարել է մոտ 1.000.000 $-ին համարժեք դրամի ներդրում: Այն վերանորոգում է իր ծրագրերում ներառած Երևանից դուրս գործող կրթօջախները, բարելավում և համալրում է այդ հաստատություններում առկա գույքը, ներդնում աշխատաշուկայում պահանջարկ վայելող նոր մասնագիտությունների ուսուցման գործառույթներ, ինչպես նաեւ կազմակերպում մասնագիտական ու արտադասարանական ուսումնական աշխատանքներ: Հանրապետության տարբեր մարզերում գործող11 քոլեջների հետ համագործակցությունը հիմնադրամն իրականացնում է համաձայն երկողմանի կնքված պայմանագրերի: Քոլեջների ընտրությունը կատարվել է այն նախապայմանով, որ դրանք պետք է ունենան 500-600 ուսանողի համար նախատեսված տարածքային հնարավորություններ: Նշենք, որ բարեկարգման, շինարարական եւ այլ աշխատանքների ընթացքում հիմնադրամը համագործակցում է մարզպետարանների, քաղաքապետարանների եւ այլ գերատեսչությունների հետ:

ԱԱԿՀ-ի ամենամեծ ներդրումը

Հայաստանում ծավալած գործունեության անցած 3 տարիներին «Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամը ամենամեծ ներդրումը կատարել է Արարատի պետական քոլեջում: Այստեղ արդեն իրականացված աշխատանքների ընդհանուր ծավալը հասել է106 հազար $-ին համարժեք դրամի:

Մարալիկի ուսումնարանին՝ ևս 60 հազար $

ԱԱԿՀ-ն Մարալիկի արհեստագործական ուսումնարանում ներդրել է շուրջ 79 հազար ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ ամբողջությամբ նորացվել է կրթօջախի խարխուլ տանիքը և ջեռուցման համակարգը, նորոգվել և ժամանակակից պահանջներին համապատասխան հարդարվել են հագուստի մոդելավորման և կարի արտադրության տեխնոլոգիայի, հասարակական սննդի պատրաստման և սպասարկման, շինարարական հարդարման, վարսավիրական արվեստի և զարդային դիմահարդարման մասնագիտացված դասասենյակները:

Նշենք, որ շուտով քոլեջի շենքում բոլոր պատուհանները կփոխարինվեն նորերով: Այդ աշխատանքների համար հիմնադրամը հատկացրել է ևս 60 հազար ԱՄՆ դոլար:

Եղեգնաձորի պետական քոլեջում

«Անուշավան Աբրահամյան» բարեգործական կրթական հիմնադրամը ընդհանուր առմամբ կատարել է շուրջ 34,7 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամի ներդրում՝ նորոգվել է կրթօջախի տանիքը, նորոգվել և ժամանակակից պահանջներին համապատասխան հարդարվել են հագուստի մոդելավորման և կարի արտադրության տեխնոլոգիայի, հասարակական սննդի պատրաստման և սպասարկման, շինարարական հարդարման, վարսավիրական արվեստի և զարդային դիմահարդարման մասնագիտացված դասասենյակները: Քանի որ քոլեջն արդեն գազաֆիկացված է, ապա նախատեսվում է քոլեջն ապահովել լոկալ ջեռուցման համակարգով, որի ընդհանուր արժեքը կկազմի 22 հազար դոլար: